ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ **ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Թեմա ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ, ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

Հետազոտող՝ **Մարինե Աբրահամյան**

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

Ղեկավար՝ ԼՈՒՍԻՆԵ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 1

ԳԼՈՒԽ 1. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ, ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ..... 3

1.1 Տարաբնակեցման էությունը, դերը, նշանակությունը..... 3

1.2 ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտման հիմնահարցերը..... 4

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ, ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԵՆՔԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ 5

2.1 «Լեռնային տարածքներ» հասկացության բնորոշման հարցի շուրջ 5

2.2 Սահմանամերձ տարածքներ հասկացության մեկնաբանությունը, ՀՀ սահմանամերձ տարածքների բնութագիրը..... 10

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 12

3.1 Բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման բնորոշ գծերը 12

Առաջարկություններ 18

Գրականության ցանկ..... 20

Ներածություն

Թեմայի արդիականությունը: ՀՀ-ում բնակավայրերը տեղաբաշխված են ծովի մակարդակից 400-2400մ բարձրությունների միջև, որի պատճառով կախված աշխարհագրական դիրքից և տեղադիրքից առանձին բնակավայրերի և տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման բնաաշխարհագրական նախադրյալներն ու հնարավորությունները տարբեր են: Հաշվի առնելով նաև այս հանգամանքը ՀՀ կառավարության կողմից կատարվել է բնակավայրերի դասակարգում ըստ բարձունքային նիշերի: ՀՀ կառավարության 1998թ. որոշմամբ լեռնային համարվում են ծովի մակարդակից 1700-2000մ, բարձր լեռնային՝ 2000մ-ից ավելի բարձրության վրա գտնվող բնակավայրերը: ՀՀ-ում նշված բարձրության գոտիները զբաղեցնում են երկրի ցամաքային տարածքի համապատասխանաբար 18 և 42,5%-ը: Այդպիսի տարածքներում են գտնվում ՀՀ 13 քաղաք և 347 մշտական

բնակչությամբ գյուղ, որոնց 2018թ. դրությամբ բաժին էր ընկնում ՀՀ բնակչության 17,3%-ը, մշտական բնակչություն ունեցող բնակավայրերի՝ 37%-ը:

Բացի լեռնային ու բարձր լեռնայն շրջաններից ՀՀ ժամանակակից աշխարհաքաղաքական իրավիճակում տարածաշրջանային զարգացման հիմնախնդիրների շարքում առանձնակի կարևորություն ունեն սահմանամերձ տարածքները, որոնք զբաղեցնում են երկրի տարածքի մոտ 24%-ը: ՀՀ սահմանամերձ գոտում են գտնվում ՀՀ մշտական բնակչություն ունեցող բնակավայրերի ընդհանուր թվի 20,4%-ը՝ 9 քաղաք և մշտական բնակչություն ունեցող 191 գյուղ (ՀՀ գյուղերի 20,8%-ը):

Ինչպես խորհրդային վերջին տասնամյակներին, առավել ևս երրորդ հանրապետության տարիներին ՀՀ-ում առանձնահատուկ կարևորություն է տրվել և տրվում է սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների (շրջանների) սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին:

Ի թիվս այլ գործոնների, ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների սոցիալ-տնտեսական զարգացումը, մարդկային ներուժի, տարածքային ու այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, ինչպես նաև առկա հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է նաև նշված տարածքներում տարաբնակեցման մեջ տեղի ունեցող գործընթացներից, դրանց արդյունավետ կազմակերպումից, առկա հիմնախնդիրների բացահայտումից և կառավարումից: Տարաբնակեցումը լինելով հասարակության տարածքային կազմակերպման հենքը՝ իր հերթին ազդում է տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր կողմերի վրա: Հետևաբար, ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման արդի վիճակի հետազոտությունը՝ առկա հիմնախնդիրների բացահայտումը և լուծման ուղիների մատնանշումը խիստ արդիական է և ունի գիտա-կիրառական կարևոր նշանակություն:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է կատարել ՀՀ լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների տարաբնակեցման համալիրային աշխարհագրական հետազոտություն՝ բացահայտել նշված տարածքների բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման, բնակավայրերի մարդաքանակի և տարաբնակեցման տարածքային կառուցվածքի առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, տարաբնակեցման շարժընթացի հետ կապված առկա հիմնախնդիրները, մատնանշել լուծման ուղիները:

ԳԼՈՒԽ 1. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ, ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

1.1 Տարաբնակեցման էությունը, դերը, նշանակությունը

Տարաբնակեցումը սոցիալ-տնտեսական բարդ գործընթաց է, որն արտացոլում է հասարակական կյանքի տարբեր կողմերը: Այն դինամիկ, ժամանակի մեջ ձգվող գործընթաց է , արտացոլում է որևէ երկրում կամ տարածաշրջանում բնակչության տարածման պատմական ընթացքը և ուղեկցվում է բնակավայրերի առաջացմամբ ու փոփոխություններով: Այդ հասկացության բովանդակությունն ընդգրկում է բնակչության տեղաբաշխումը, բնակավայրերի փոխադարձ կապերը և բնակչության միգրացիան: Հասարակության զարգացման ամեն մի նոր փուլ իր ներգործությունն է ունենում թե՛ առանձին բնակավայրերի, թե՛ բնակավայրերի տարածական համակարգի ու ցանցի, տարաբնակեցման բոլոր կողմերի վրա:

Որոշակի տարածքում տարաբնակեցման ձևավորման ու զարգացման գործընթացը պայմանավորված է պատմական, սոցիալ-տնտեսական, բնական, ժողովրդագրական, աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և այլ գործոններով: Տարաբնակեցման գլխավոր օրինաչափությունը տարաբնակեցման ձևերի համապատասխանությունն է հասարակական արտադրության բնույթին և արտադրողական ուժերի զարգացման մակարդակին: Նյութական արտադրության զարգացման շնորհիվ ժամանակի ընթացքում փոխվում են տարաբնակեցմանը ներկայացվող հասարակական պահանջները, ինչպես նաև նոր բնակավայրերի ու նրանց խմբավորումների ստեղծման ու զարգացման հնարավորությունները: Նյութական արտադրության տարբեր ձևերն ու ոլորտները տարաբնակեցմանը տարբեր պահանջներ են ներկայացում, տարբեր պայմաններ են ստեղծում բնակչության կենտրոնացման, տարաբնակեցման ձևերի ձևավորման ու զարգացման համար : Հասարակության զարգացման տարբեր փուլերում փոխվել են ոչ միայն տարաբնակեցման ձևավորման և զարգացման հնարավորությունները, այլ նաև տարաբնակեցման ձևերն ու դրանց բովանդակությունը :

Մեր կարծիքով տարաբնակեցումը պատմական զարգացման ընթացքում բնակչության տարածական բաշխման շնորհիվ ձևավորված բնակավայրերի տարածքային կազմակերպման ձև և գործընթաց է՝ բնակավայրերի որոշակի ենթակարգվածությամբ ու միջբնակավայրային բազմաբնույթ կապերով:

:

Տարաբնակեցման համակարգը տարածականորեն ամբողջական և գործառութային առումով փոխկապակցված բնակավայրերի ամբողջություն է, որը բնութագրվում է ինչպես դրա կազմի մեջ մտնող բնակավայրերի հատկանիշներով, այնպես էլ դրանց միջև սոցիալ-տնտեսական կապերի կառուցվածքով և ինտենսիվությամբ : Տարաբնակեցման համակարգերի սահմանների և դրանց զարգացվածության մակարդակի որոշման հիմնական չափորոշիչ է հանդիսանում կապերի ինտենսիվությունը: Տարաբնակեցման համակարգերի հիմնական առանձնահատկություններից է կենտրոնի առկայությունը (սովորաբար քաղաքի), որի շուրջ ձևավորվում է տարաբնակեցման համակարգը [նույն տեղում]: Սա պայմանավորված է բնակավայրերի գործառութային և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի տարբերություններով, որն իր հերթին ձևավորում է տարաբնակցման համակարգերի ենթակարգային կառուցվածքը : Որքան մեծ են բնակավայրերը, այնքան դրանք ավելի բազմագործառութային են և ունեն ձգողականության ավելի մեծ դաշտ, հետևաբար նաև ունեն ավելի բարձր դիրք տարաբնակեցման համակարգերի ենթակարգային կառուցվածքում:

1.2 ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտման հիմնահարցերը

Հասարակության և բնական միջավայրի միջև փոխազդեցության պատմական գործընթացը հասկանալու համար մեծ նշանակություն և դեր ունի տարաբնակեցման հետազոտությունը, քանի որ հենց բնակավայրերում, որոնք հանդիսանում են և՛ մարդկանց բնակության, և՛ արտադրական օբյեկտների տեղաբաշխման վայրեր, խտացված ձևով արտահայտվում է մարդու (հասարակության), արտադրության և բնության փոխազդեցության բնույթը : Տարաբնակեցման հետազոտությունը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ հանդիսանալով հասարակության տարածքային կազմակերպման հենք և բաղադրիչ, այն իր հերթին հակադարձ ազդեցություն է թողնում արտադրության տարածքային կազմակերպման և հասարակության զարգացման վրա: Մյուս կողմից, գնալով ընդլայնվում են հասարակության պահանջները բնակչության ապրելակերպի սոցիալ-մշակութային և էկոլոգիական պայմանների նկատմամբ, որոնք անբաժան են տարաբնակեցման ձևերից: Եվ վերջապես, աստիճանաբար մեծանում են հասարակության հնարավորությունները տարաբնակեցման զարգացման առավել

արդյունավետ ուղիների ընտրության և իրականացման համար [նույն տեղում]:

ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքներում տարաբնակեցման զարգացման գործընթացներում առկա միտումների և հիմնախնդիրների բացահայտման համար հույժ կարևոր է ըստ առկա և մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշների տարաբնակեցման շարժընթացի վերլուծությունը և գնահատումը, քանի որ վերջին երեք տասնամյակում տեղի ունեցած բնակչության մեծ ծավալի արտագաղթը զգալիորեն խախտել է այդպիսի տարածքների ժողովրդագրական գործընթացների բնականոն ընթացքը:

ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների բնակավայրերի զարգացման և տարաբնակեցման բարեփոխումների համար առանձնահատուկ դեր ունի ժողովրդագրական իրավիճակը, մասնավորապես՝ բնակչության տարիքային կառուցվածքն ըստ հիմնական տարիքային խմբերի: Նշված շրջանների տարածքային ռեսուրսների և գյուղատնտեսական հողատարածքների օգտագործման արդյունավետությունը և տնտեսական առաջընթացն այլ գոր-ծոնների հետ միասին կախված է նաև առկա մարդկային ներուժի արդյունավետ օգտագործումից և օպտիմալ կառավարումից: Ուստի, այդպիսի տարածքների ժողովրդագրական իրավիճակի հիմնական բաղադրիչներից մեկի՝ գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի ուսումնասիրությունը խիստ արդիական է և ունի ոչ միայն գիտական, այլ նաև կիրառական կարևոր նշանակություն: Դա հնարավորություն է կտա բացահայտել սահմանամերձ լեռնային և բարձր լեռնային գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքի (ըստ հիմնական տարիքային խմբերի) առանձնահատկությունները, տարածքային տարբերությունները, առկա հիմնախնդիրները և մատնանշել լուծման ուղիները:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ, ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԵՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2.1 «Լեռնային տարածքներ» հասկացության բնորոշման հարցի շուրջ

Լեռնային տարածքներն ունենալով բազմազան և հարուստ ռեսուրսներ, առանձնանում են իրենց ինքնատիպությամբ, որը պահանջում է այդպիսի տարածքների համակողմանի հետազոտություն՝ արդյունավետ բնօգտագործման, բնակեցման և օպտիմալ տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Բայց այս խնդիրը միշտ եղել է շատ բարդ և հակասական: Լեռնային տարածաշրջանների առանձնացման Եվրոպական Խարտիայում նշվում է, որ դրանք

տարածքներ են, որտեղ տեղանքի բարձրությունը, ռելիեֆը և կլիման ստեղծում են առանձնահատուկ պայմաններ, որոնք ազդում են մարդու ամենօրյա գործունեության վրա : Չնայած լեռնային տարածաշրջանների առանձնացման վերաբերյալ հրատարակվել են բազմաթիվ աշխատանքներ, սակայն չկա նույնիսկ «լեռնային տարածքներ» հասկացության վերաբերյալ համընդհանուր ձևակերպում : Այդուհանդերձ, քարտեզաչափական նորագույն հաշվարկներով պարզվել է, որ երկրագնդի տարածքի 48%-ն ընկած է ծովի մակարդակից 500մ-ից բարձր, որից 27%-ը՝ 1000մ-ից, 11%-ը՝ 2000մ-ից, 5%-ը՝ 3000մ-ից և 2%-ը՝ 4000մ-ից բարձր : Դա նշանակում է, որ լեռները և բարձրավայրերը ձևավորում են ցամաքի խոշորագույն էկոհամակարգ, և այն իրողությունը, որ երկրագնդի ցամաքի գրեթե կեսն ընկած է ծովի մակարդակից 500մ-ից բարձր գոտիներում, խոչընդոտում է լեռնային տարածքների վերաբերյալ համընդհանուր բնորոշում գտնելուն: Այդ պատճառով տարբեր երկրներում լեռնային տարածքների առանձնացման համար օգտագործվում են տարբեր չափորոշիչներ և հիմնավորումներ՝ կախված տվյալ տարածաշրջանում ռելիեֆի տարրերի քանակական և որակական ցուցանիշներից: Մասնավորապես, լեռնային շրջանների տարաբնակեցման հարցերի գծով հայտնի մասնագետ Վ. Զաոշվիլին դեռևս 1970-ական թվականներին իրավացիորեն նշում էր, որ ցածրադիր և լեռնային տարածքների միջև սահմանը տարբեր պատմաաշխարհագրական պրովինցիաներում պետք է անցկացնել դիֆերենցացված (տարբերակված) :

«<u>Լեռնային տարածքների»</u> տակ պետք է հասկանալ այն տարածությունը, որտեղ քանակական և որակական բոլոր փոփոխությունները տեղի են ունենում վերընթաց ուղղությամբ, որտեղ գյուղատնտեսական արտադրության վարման բնույթը, և մասնավորապես, հասարակական արտադրության արտադրողականու-թյունը կտրուկ տարբերվում է հարթավայրերից, հատկապես՝ ցածրադիր տարածքներից: Պրոֆեսոր Գ. Ավագյանի կարծիքով առանձին տարածքների պիտանիությունը գյուղատնտեսական օգտագործման (հետևաբար նաև տարաբնակեցման) առումով գնահատելիս անհրաժեշտ է հիմք ընդունել ոչ թե մեկ կամ երկու, այլ մի քանի ցուցանիշներ միանգամից: Այդպիսիք կարող են լինել տեղանքի բացարձակ բարձրությունը, մակերևույթի կտրտվածությունը և լանջերի թեքությունների աստիճանը, դիրքադրությունը, ջերմաստիճանային ռեժիմը և հողային ֆոնդի կառուցվածքը : Նշված ցուցանիշների հիման վրա առանձնացված լեռնային տարածքը ՀՀ-ում կազմում նրա մակերեսի մոտ 85%-ը:

ՀՀ-ն տիպիկ լեռնային երկիր է: Այստեղ տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից անցնում է 1830մ-ից: Այն մակերևույթի հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածությամբ տարբերվում է հարևան երկրներից:

Աղյուսակ 1

ՀՀ տարածքի բաշխվածությունն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության[1]

Բարձրության գոտիները (մ)	Բարձրության գոտու զբաղեցրած մակերեսը	
	կմ^2-ով	%-ով
Մինչև 800	607,3	2,1
801-1000	2347,5	8,3
1001-1600	6810,2	23,9
1601-1800	2961,1	10,4
1801-2000	3653,2	12,8
2001-2250	4149,0	14,6
2250-2500	3035,0	10,7
2500-ից բարձր	4901,0	17,2
Ընդամենը	28464,3*	1000

1.Աղյուսակը կազմված է Погосян Д. А. Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР, Изд. АН ССР Е. 1986. с. 16, գրքի տվյալների հիման վրա:

*Առանց Սևանա լճի մակերեսի:

Հանրապետության տարածքի մոտ 2/3-ում խորքային մասնատվածությունը գերազանցում է 100մ-ից (առանձին դեպքերում հասնելով մինչև 800մ-ի) և միայն 1/3-ում է այդ ցուցանիշը հաշվվում տասնյակ մետրով : Երկրի ցամաքային տարածքի շուրջ 90%-ի վրա հորիզոնական մասնատվածության ցուցանիշը գերազանցում է 400մ/կմ^2-ուն, իսկ 30%-ի վրա այն կազմում է 1000մ/կմ^2 [նույն տեղում]: Մշակելի հողերի կեսից ավելին (55%) ունեն մինչև 5 հա մակերես, իսկ առանձին տարածաշրջաններում այդ ցուցանիշը հասնում է 70%-ի: Տարածքի ծովի մակարդակից նվազագույն և առավելագույն բարձրությունների տարբերությունը կազմում է 3700մ (4090-390): Երկրի տարածքի մոտ 90%-ն ընկած է ծովի մակարդակից 1000մ-ից բարձր շրջաններում, իսկ ավելի քան 40%-ը՝ 2000մ-ից բարձր: «Եթե վերանանք մասնավոր դեպքերից, ապա ՀՀ աշխարհագրական լայնություններում մարդու կյանքի և աշխատանքի համար առավել նպաստավոր պայմաններ կան մինչև 1400մ բացարձակ բարձրություն ունեցող գոտում, որից հետո դրանք նկատելիորեն վատանում են: Սկսած 2000մ-ից այդ պայմանները դառնում են անբարենպաստ, երևան են գալիս արտադրական բնույթի դժվարություններ», նշում է պրոֆեսոր Լ. Վալեսյանը :

Հանրապետության լեռնային և բարձր լեռնային շրջաններում տարածքային և մարդկային ներուժի այդպիսի առկայությունը խիստ կարևորում է այդ տարածքներում տեղի ունեցող տարաբնույթ սոցիալ-տնտեսական

գործընթացներում առկա միտումների վերլուծությունը, հիմնախդիրների բացահայտումը և գնահատումը: Ի թիվս այլ գործոնների, ՀՀ լեռնային տարածքների սոցիալ-տնտեսական զարգացումը, տարածքային ու մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը պայմանավորված է նաև տարաբնակեցման և նրա առանձին



Քարտեզ 1. ՀՀ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի տարածքը

տարրերում տեղի ունեցող գործընթացներից, քանի որ տարաբնակեցումը լինելով հասարակության տարածքային կազմակերպման հենքը, իր անմիջական և միջնորդավորված ազդեցությունն է թողնում տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր կողմերի վրա:

2.2 Սահմանամերձ տարածքներ հասկացության մեկնաբանությունը, ՀՀ սահմանամերձ տարածքների բնութագիրը

Ըստ «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի՝ ՀՀ պետական սահմանագծից ՀՀ տարածքի խորքը մինչև 5 կմ լայնությամբ ծավալվող տարածքը կոչվում է սահմանային գոտի: Սահմանային գոտու մի մասը, որը հարում է պետական սահմանին՝ մինչև 1 կմ լայնությամբ, կոչվում է սահմանային շերտ : ՀՀ-ում սահմանային գոտին տարածվում է ՀՀ 10 մարզերից 9-ի տարածքով, բացառություն է կազմում կենտրոնական դիրք զբաղեցնող Կոտայքի մարզը: Սահմանամերձ շերտը, որը կազմում է ՀՀ տարածքի 4,8%-ը, զբաղեցնում է 1431 կմ^2 մակերես, իսկ սահմանային գոտին ընդգրկում է 7155 կմ^2 (ՀՀ տարածքի 24%-ը) :

2017թ. հունվարի 1-ի դրությամբ սահմանամերձ գոտու բնակչության թիվը կազմել է 243219 մարդ :

Արմավիրի և Արարատի մարզերի սահմանային գոտու 60-80%-ը քաղաքաշինորեն և տնտեսապես ինտենսիվ յուրացված է: Սյունիքի մարզի սահմանային տարաբնակեցված տարածքի մոտ 20%-ն է ինտենսիվ բնակեցված, իսկ մյուս մարզերի սահմանային գոտիների տարաբնակեցված տարածքները հիմնականում թույլ են յուրացված: Տարաբնակեցման համար անբարեհաջող տարածքերը մեծ տեսակարար կշիռ ունեն Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի սահմանամերձ տարածքներում :

ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» թիվ



Քարտեզ 2. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի վարչական տարածքը

173 որոշմամբ սահմանամերձ համայնքների (բնակավայրերի) ցանկերը հաստատելիս հիմք են ընդունվել հետևյալ չափանիշները.

ա) Ադրբեջանի Հանրապետության հետ պետական սահմանի սահմանային գոտում գտնվելը,

բ) Հայաստանի Հանրապետության սահմանային շերտում գտնվելը,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 1993-1995 թվականների որոշումներով հաստատված ցանկերում ընդգրկված լինելը:

Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի բաշխվածության և դրանց զբաղեցրած տարածքների վերաբերյալ ականռու պատկերացում է տալիս թիվ 2 քարտեզը:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման բնորոշ գծերը

Այս կամ այն տարածքում բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխումը և բնակեցվածության աստիճանը պայմանավորված է բնական, պատմական, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական և տեղային այլ գործոններով: Վերջիններիս ազդեցության աստիճանը տարածքի (տարածաշրջանի) բնակեցվածության ու բնակավայրերի տեղաբաշխման վրա պայմանավորված է կոնկրետ տվյալ ժամանակահատվածում տարածքի տնտեսական յուրացվածության և բնական միջավայրի միջև ստեղծված կապերով, կամ՝ տնտեսության զարգացման մակարդակով:

ՀՀ-ում 182 բնակավայր ունեն լեռնայինի կարգավիճակ, որից 176-ը՝ գյուղական, 6-ը՝ քաղաքային : Դրանց բաժին է ընկնում ՀՀ բնակավայրերի ընդհանուր թվի շուրջ 18 և բնակչության՝ 7,7%-ը (ՀՀ գյուղական բնակչության 14,4 և քաղաքային բնակչության՝ 3,9%-ը): Բարձր լեռնային բնակավայրերի ընդհանուր թիվը 178 է, որից 171-ը՝ գյուղական, 7-ը՝ քաղաքային : Դրանց 2017թ-ին բաժին էր ընկնում ՀՀ բնակչության ընդհանուր թվի 9,9%-ը (ՀՀ գյուղական բնակչության՝ 19,9 և քաղաքային բնակչության՝ 4,2%-ը):

Եթե հանրապետության լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակավայրի թիվը գրեթե հավասար է, ապա բնակչության թվի առումով բարձր լեռնային տարածքները լեռնայիններին գերազանցում են ավելի քան 68 հազարով: Նշված տարածքների միջև բնակչության թվաքանակի այդպիսի տարբերությունը

նախ և առաջ պայմանավորված է բարձր լեռնային շրջաններում (առավելապես 2001-2200 մ բարձրություններում) մշտական բնակության համար պիտանի սևահողային առավել ընդարձակ տարածքների, խոտհարքների և արոտավայրերի առկայությամբ, բարձրության այդ գոտիների զբաղեցրած մակերեսներով, մակերևույթի առանձնահատկություններով և այլ գործոններով:

Արմավիրից և Տավուշից բացի լեռնային և բարձր լեռնային բնակավայրեր կան ՀՀ մնացած բոլոր մարզերում: Արարատի և Լոռու մարզերում չկան բարձր լեռնային բնակավայրեր, իսկ մնացած վեց մարզերն ունեն ինչպես լեռնային, այնպես էլ բարձր լեռնային բնակավայրեր: Նմանատիպ բնակավայրերի թվով նախ և առաջ առանձնանում են Գեղարքունիքը (88 բնակավայր), Շիրակը (83 բնակավայր) և Արագածոտնը (65 բնակավայր): Դրանց բաժին է ընկնում ՀՀ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի շուրջ 66%-ը: ՀՀ-ում լեռնային և բարձր լեռնային բնակավյրերի և բնակչության թվի ըստ մարզերի բաշխվածության մասին հանգամանալից պատկերացում են տալիս թիվ 4 աղյուսակում բերված տվյալները:

Աղյուսակ 4

ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակչության և բնակավայրերի բաշխվածությունն ըստ մարզերի (2017թ.) [71]

Մարզեր	Գյուղական				Քաղաքային		Ընդհանուր	
	Լեռնային		Բարձր լեռնային		Քաղաքային		Ընդամենը	
	ա	բ	ա	բ	ա	բ	ա	բ
Արագածոտն	25	21792	39	28436	1	6165	65	56393
Արարատ	6	2889	0	0	-	-	6	2889
Գեղարքունիք	8	11056	75	157785	5	68373	88	237214
Լոռի	30	34700	0	0	-	-	30	34700
Կոտայք	19	24452	5	3831	2	42024	26	70307
Շիրակ	46	43314	35	20623	2	23876	83	87813
Սյունիք	28	13276	10	2273	2	7348	40	22897
Վայոց ձոր	14	5916	7	2237	1	4324	22	12477
ՀՀ-ում	176	156407	171	216173	13	152110	360	524690

ա- բնակավայրերի թիվը, բ- բնակչության թիվը

Այսպիսով.

1) ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներում բնակչության և բնակավայրերի տեղաբաշխումն առանձնանում է տարածքային (տարածաշրջանային) խիստ անհամամասնությամբ: Բնակավայրերի 66 և բնակչության մոտ 73%-ը բաժին է ընկնում Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերին, իսկ Սյունիքի և Վայոց ձորի մարզերին, որոնք զբաղեցնում են ՀՀ նմանատիպ տարածքների 24,9%-ը, բաժին է ընկնում բնակավայրերի 17,3 և բնակչության ընդամենը 6,7%-ը,

2) ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներն առանձնանում են ոչ միայն բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման, այլ նաև բնակեցվածության (բնակչության և բնակավայրերի խտության) զգալիորեն մեծ տարբերություններով: Բնակեցվածության աստիճանն (բնակչության խտությունն) առավել բարձր է Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի և Շիրակի մարզերում, մնացած մարզերում՝ զգալիորեն ցածր: Գյուղական բնակչության խտության առավել բարձր ցուցանիշներ ունեն Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, և Արագածոտնի, իսկ ցածր ցուցանիշներ՝ Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի և Շիրակի մարզերը:

Եզրակացություններ

1. ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման համալիր աշխարհագրական հետազոտությունը հնարավորություն է տալիս բացահայտել այդպիսի տարածքների տարաբնակեցման ձևավորման և արդի վիճակի առանձնահատկությունները, ինչպես նաև պարզել տարաբնակեցման զարգացման գործընթացներում առկա միտումներն ու հիմնախնդիրները, մատնանշել զարգացման ուղիները: Այդպիսի ուսումնասիրությունները, ի թիվս այլ գործոնների համարվում են նշված տարածքների մարդկային և այլ կարգի ռեսուրսների արդյունավետ օգտագործման և տնտեսության զարգացման կարևոր պայմաններից մեկը:
2. Սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության կարևոր խնդիրներից են բնակեցվածության, բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման համաչափության, բնակավայրերի ցրվածության, մարդաքանակի, տարաբնակեցման տարածքային կառուցվածքի, բնակավայրերի տրանսպորտաաշխարհագրական դիրքի, գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային հիմնական խմբերի կառուցվածքի, տարաբնակեցման տարածքային կառուցվածքի և վարչատարածքային բաժանման փոխազդեցությունների, ինչպես նաև տարաբնակեցման շարժընթացի և առկա հիմնախնդիրների վերլուծությունը, գնահատումը և տարաբնակեցման զարգացման ուղիների մատնանշումը:
3. ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների ժամանակակից տարաբնակեցման հենքը հիմնական գծերով ձևավորվել է շուրջ մեկդարյա (1830-ական թթ. - 1920-ական թթ.) ժամանակահատվածում տեղի ունեցած պատմական իրադարձությունների, ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական գործընթացների շնորհիվ: Հետագա տասնամյակների ընթացքում տեղի ունեցած տարաբնույթ գործընթացներն իրենց անմիջական և միջնորդավորված ազդեցությունն են թողել նշված տարածքների տարաբնակեցման վրա:
4. ՀՀ լեռնային և բարձր լեռնային տարածքներն առանձնանում են բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման տարածքային խիստ անհամաչափությամբ, բնակեցվածության ցուցանիշների և բնակավայրերի մարդաքանակի զգալիորեն մեծ տարբերություններով, ըստ գերակշռող մարդաքանակի գյուղական բնակչության բաշխվածության բևեռացմամբ, ըստ մարդաքանակի գյուղական բնակավայրերի տեղաբաշխման տարածաշրջանային մեծ տարբերություններով:

5. ՀՀ սահմանամերձ տարածքներն ունեն բնակեցվածության ցուցանիշների տարածաշրջանային զգալի տարբերություններ: Բացառությամբ Արմավիրի, մնացած մարզերի սահմանամերձ տարածքներում բնակչության խտությունն ընդհանուր տարածքի հաշվով զգալիորեն փոքր է ՀՀ համապատասխան միջին ցուցանիշից: Նշված տարածքներում գյուղական բնակչության և բնակավայրերի հիմնական մասը տեղաբաշխված են մինչև 1500մ բարձրության գոտում:
6. Բացառությամբ Շիրակի, ՀՀ սահմանամերձ մնացած տարածքներում գյուղական բնակավայրերի մարդաքանակն ուղիղ համեմատական կախվածություն ունի մշակելի հողատարածքների մեծությունից: Գյուղերի մարդաքանակի փոփոխությունն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության միանշանակ չէ. մարզերի մեծ մասում այն համապատասխանում է գոյություն ունեցող օրինաչափությանը, իսկ Տավուշի և Սյունիքի մարզերում կոռելյացիան բացակայում է:

7. Սահմանամերձ տարածքներում գյուղերի մարդաքանակի և տարբեր գործոնների միջև կոռելյացիոն կապի ցուցանիշների տարածաշրջանային տարբերությունները հիմք են տալիս գյուղական տարածքների ու առանձին բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման տարաբնույթ խնդիրների լուծման համար իրականացնել տարաբերակված տարածաշրջանային քաղաքականություն:
8. ՀՀ սահմանամերձ տարածքներն առանձնանում են տարաբնակեցման տարածքային կառուցվածքի և գյուղական բնակավայրերի տրանսպորտա-աշխարհագրական դիրքի տարբերություններով և առանձնահատկություններով, որոնք իրենց անմիջական ու միջնորդավորված ազդեցությունն են թողնում այդպիսի տարածքների և բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման, վարչատարածքային բաժանման և տեղական ինքնակառավարման կազմակերպման գործընթացների վրա:

շրջկենտրոններից առանձնացած, դրանց դինամիկ շառավղի սահմաններին մոտ կամ դուրս գտնվող և խոշորացվող համայնքների տեսլականին բավարարող մեծ (3000 բնակչից ավելի) գյուղական բնակավայրերը, որոնք տարաբնակեցման համակարգում կարող են հավակնել տեղային նոր կենտրոններ դառնալուն, բացակայում են:

Առաջարկություններ

1. ՀՀ լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման համալիրային ծրագրերի մշակման գործընթացներում, ինչպես նաև վարչատարածքային բաժանման մեջ փոփոխություններ իրականացնելիս առաջնահերթ հաշվի առնել այդպիսի տարածքների տարաբնակեցման առանձնահատկությունները և զարգացման միտումները:
2. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում ստեղծել օղակ, որը կմշակի ՀՀ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային տարածքների տարաբնակեցման գործընթացներում տեղի ունեցող երևույթները և առաջարկություններ կներկայացնի այդպիսի տարածքներում տարաբնակեցումն արդյունավետ կազմակերպելու և կառավարելու համար:
3. Հաշվի առնելով լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների տարաբնակեցման առանձնահատկությունները և շարժընթացի արդի միտումները, ՀՀ կառավարության, մարզային, տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետք է մշակվեն և իրականացվեն այդպիսի տարածքների սոցիալ-տնտեսական առաջնահերթ ծրագրեր, որոնց շնորհիվ պայմաններ կստեղծվեն նշված տարածքներում բնակչության թվի նվազումը կանխելու, ռեսուրսային ներուժն արդյունավետ օգտագործելու և երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու համար:
4. ՀՀ կառավարության տարածաշրջանային և ժողովրդագրական քաղաքականության անհետաձգելի խնդիրներից մեկը պետք է դառնա օգտագործելով ֆինանսական, սոցիալական, հարկային և այլ լծակներ՝ սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում ծնելիության մակարդակը բարձրացնելու և բնակչության առավել նպաստավոր տարիքային կառուցվածք ձևավորելու համար:
5. Առանձնակի վերանայման կարիք ունի վերջին տարիներին հանրապետությունում իրականացված վարչատարածքային բաժանման փոփոխությունները: Հաշվի առնելով լեռնային և բարձր լեռնային տարածքների

առանձնահատուկ պայմանները, բնակավայրերի աշխարհագրական դիրքի տեղաբաշխման բնույթը կենտրոնականի և միմյանց նկատմամբ, առավել նախընտրելի է համայնքների խոշորացման փնջային տարբերակը: Այն փոքր գյուղական բնակավայրերը, որոնք առանձնացած են բնակավայրերի ընդհանուր ցանցից, կենտրոնից գտնվում են խիստ անբարենպաստ տրանսպորտային մատչելիության գոտում, ունեն փակուղային դիրք, պետք է ունենան ինքնուրույն համայնքի կարգավիճակ և ստանան օրենքով կարգավորվող լրացուցիչ արտոնություններ և դոտացիաներ:

Գրականության ցանկ

1. Վալեսյան Լ.Հ., Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Լույս հրատարակչություն, Ե. 1988:
2. Պոտոսյան Ա.Հ., Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Ե. 2017:
3. Մանասյան Մ.Գ., ՀՀ տարաբնակեցման համակարգը, Ե., 2005:
4. Մանասյան Մ.Գ., Աշխարհագրության ներածություն, Ե., 2008:

5. Ավագյան Գ.Ե., Հայկական ՍՍՀ բնակչությունը, Ե., 1975թ:
6. Ավագյան Գ.Ե., Լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրները, //Աշխարհագրական հարցեր//, գիտական աշխատանքների ժողովածու, Ե. 1986:
7. Ավետիսյան Խ.Ա., Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Ե. 1987:
8. Մանասերյան Ն., Առավել ուշադրություն լեռնային շրջանների զարգացմանը, Լենինյան ուղիով, 1979, թիվ 4:
9. Մանասերյան Ն., Գյուղական բնակչության շարժի արդի միտումները և լեռնային շրջանների զարգացման պրոբլեմները, Հայաստանի ժողովրդական տնտեսություն, 1983, թիվ 1
10. Մանասյան Վ.Գ., Գյուղական փոքր բնակավայրերի հիմնահարցերը, Գյուղատնտեսական գիտությունների տեղեկագիր, 1993:
11. Պոտոսյան Ա.Հ., Ղամբարյան Գ., Տարաբնակեցումը որպես արդյունավետ բնօգտագործման նախադրյալ//Աշխարհագրություն 2001, Շիրակի մարզի բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանության հիմնախնդիրները//, գիտագործնական կոնֆերանսի նյութեր, Ե., 2001:
12. Մանասյան Մ., Մանասյան Հ., ՀՀ լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման հիմնահարցերը (Սյունիքի մարզի օրինակով), ԵՊՀ տնտ. Ֆակուլտետ, Տարեգիրք 2013, Ե., 2013:
13. Մանասյան Մ., Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման կարգավորման հիմնահարցերը, ԵՊՀ տնտ. ֆակուլտետ, Տարեգիրք 2011:
14. Պոտոսյան Վ.Ա., ՀՀ սահմանամերձ տարածքներում տարաբնակեցման շարժընթացը եվ առկա հիմնախնդիրները, ԵՊՀ Գիտական տեղեկագիր. երկրաբանություն և աշխարհագրություն: 2017: